

Լիա Թևոսյան

ԵՄՀ իրավագիտության ամբիոնի վարիչի օգնական

## «ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԵԶՐՈՒՅԹԻ ՀԱՄԱՎՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում վերլուծվում է հեղինակային և հարակից իրավունքների հասկացությունը ներպետական օրենսդրության պաշտպանության դիրքերից:

Համեմատականներ են անցկացվել ժամանակակից իրավական ընտանիքին պատկանող երկրների մտավոր սեփականության «հեղինակային իրավունք» եզրույթների միջև: Տրվել է հեղինակային և հարակից իրավունքների միասնական բնորոշում, իրականացվել է օրենսդրական ընդհանրացում (միասնացում):

**Հիմնաբառեր.** մտավոր սեփականություն, հեղինակային իրավունք, հարակից իրավունքներ, հասկացություն, պաշտպանություն, կոնվենցիա, անձնական ոչ գույքային իրավունքներ, գույքային իրավունքներ, ընդհանրացում:

Մշակույթի և գիտելիքների գործառույթների փոփոխությունը 20-րդ դարավերջի քաղաքակրթության մեջ հանգեցրին մտավոր գործունեության արդյունքների ծավալների մեծացման: Մարդկային գիտակցությունն ու դրա ստեղծած արժեքները դարձան տնտեսական շրջանառության օբյեկտների գլխավոր տեսակ: Այդ տեսանկյունից հեղինակային իրավունքը, որպես հասարակության մեջ գործառույթ իրավունքների համալիր, նպատակ ունի նյութականացնել ստեղծագործության ներդրման ազատությունը: Այդ մոտեցումն արտահայտված է Մարդու իրավունքների համաընդհանուր հռչակագրի<sup>1</sup> 27-րդ հոդվածում, համաձայն որի «Յուրաքանչյուր ոք հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու

<sup>1</sup> Տես Մարդու իրավունքների համաընդհանուր հռչակագիրը՝ ընդունված 1948թ-ի դեկտեմբերի 10-ին:

և դրա բարիքներից օգտվելու իրավունք ունի: Յուրաքանչյուր ոք իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական աշխատանքի բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք ունի»:

Հեղինակային իրավունքի մասին խոսելիս նախևառաջ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մտավոր սեփականության ինստիտուտին, քանի որ մտավոր սեփականությունը սահմանումը վերաբերում է մարդու մտավոր ստեղծագործական գործունեության արդյունքներին: Մտավոր սեփականությունը՝ որպես իրավանորմերի որոշակի խումբ, պաշտպանում է ստեղծագործողների շահերը՝ նրանց ստեղծագործությունների նկատմամբ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ տրամադրելու, ինչպես նաև դրանց նկատմամբ իրավական պաշտպանություն իրականացնելու միջոցով:

«Մտավոր սեփականություն»<sup>1</sup> եզրույթը պայմանական է և օրենսդրության մեջ օգտագործվում է այն պատճառով, որ այն հանրային ընկալում է գտել ինչպես մայրցամաքային, այնպես էլ ընդհանուր իրավունքի երկրներում: «Մտավոր սեփականություն» եզրույթն օգտագործված է ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության<sup>2</sup> (այսուհետ՝ ՀՀ Սահմանադրություն) 31-րդ հոդվածում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքի<sup>3</sup> (այսուհետ՝ ՀՀ Քաղ.օր.) 10-րդ բաժնի 62-րդ գլխում:

Մտավոր սեփականությունը վերաբերում է մարդկային մտավոր գործունեության արդյունքում ստեղծված բոլոր ստեղծագործություններին, որոնք բաժանվում են երկու բնագավառների՝

1) արդյունաբերական սեփականություն, որի տակ լայն իմաստով հասկացվում է գյուտերի պահպանումը և

2) հեղինակային իրավունք, որի տակ լայն իմաստով հասկացվում է գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանումը<sup>4</sup>:

Չնայած վերոնշյալ դասակարգմանը՝ մտավոր սեփականության կողմից կարգավորող քաղաքացիաիրավական ինստիտուտների բաժանման այլ ձևեր ևս գոյություն ունեն<sup>5</sup>: Օրինակ՝ պրոֆ. Ս. Բարսեղյանը, մտավոր սեփականությունը տարանջատում է չորս ինստիտուտների<sup>6</sup>. դրանք են՝ ա) հեղինակային իրավունք, բ) արտոնագրային իրավունք, գ) քաղաքացիաիրավական շրջանառության մասնակիցների, նրանց ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների նկատմամբ իրավունք, դ) ոչ ավանդական օբյեկտների պահպանության ինստիտուտ<sup>7</sup>:

1 Տե՛ս Ռոզենբերգ Ա. Основы патентного права СССР. М.: 1979, էջ 42:

2 Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՀՀՊՏ 2005.12.05/Հատուկ թողարկում, հոդ. 1426, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով:

3 Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՀՊՏ 1998.08.10/17(50), ընդունված 05.05.1998թ.:

4 Տե՛ս Պատկերացում հեղինակային իրավունքի մասին: Գրքույկ: Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍԳ) էջ 3:

5 Տե՛ս Բարսեղյան Ս.Կ.: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երրորդ մաս: Երևան, 2003, էջ 12:

6 Տե՛ս նույն տեղում:

7 Տե՛ս Բարսեղյան Ս.Կ., Մտավոր սեփականության իրավունք: Երևանի պետ.համալս.-եր.: Երևանի համալս. Հրատ., 2002, էջ 14,16,17,18:

Հեղինակային իրավունքը՝ որպես մտավոր սեփականության ենթաձև՝ յուր, իր կարգավորումն է ստացել ՀՀ քաղ.օր. «Մտավոր սեփականություն» առանձին բաժնում (10), ինչպես նաև Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքում<sup>1</sup>:

Մտավոր սեփականությունը մինչև միջազգային իրավական ակտի տեսքով ամրագրվելը տարբեր երկրներում անցել է զարգացման տարբեր փուլեր: Հեղինակային իրավունքի պաշտպանության ոլորտում ընդունված է հիշատակել 1709թ. Աննա թագուհու Ստատուտը (կանոնադրություն), որը հեղինակային իրավունքի պաշտպանության մասին առաջին օրենքն էր, և որը հենց հեղինակին էր վերապահում թույլատրելու պատճենի, այսինքն՝ գրքի օրինակների պատրաստման իրավունքը: Այստեղից էլ ծագում է անգլիական «Copyright» (օրինակի իրավունք)<sup>2</sup> եզրույթը:

Հայաստանում հեղինակի իրավունքների պահպանության առաջին իրավական փաստաթուղթը ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի և Ժողովրդական կոմիսարիատի խորհրդի՝ 1930թ. փետրվարի 10-ի որոշումով հաստատված «Հեղինակի իրավունքի կանոնադրություն»-ն է: Հետագայում այն ենթարկվել է փոփոխությունների և տեղ է գտել ՀՍՍՀ-ում 1964 թվականին ընդունված քաղաքացիական օրենսգրքի «Հեղինակային իրավունք» բաժնում<sup>3</sup>: 1996 թվականին առանձին օրենք ընդունվեց հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին: 2000թ. ընդունվեց նոր օրենք, որը համապատասխանում էր միջազգային չափանիշներին, քանի որ ՀՀ-ն արդեն Գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի<sup>4</sup> (այսուհետ՝ Բեռնի կոնվենցիա) անդամ էր: 2006 թվականի հունիսին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» նոր օրենք, որը ներառում էր Գրական և գեղարվեստական երկերի պահպանության Բեռնի կոնվենցիայի, Եվրամիության հեղինակային և հարակից իրավունքներին առնչվող դիրեկտիվների և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄՍՀԿ) 1996թ. Ինտերնետային պայմանագրերի հիմնական դրույթները: Այս օրենքը գործում է մինչ օրս, սակայն ունի մի շարք փոփոխությունների կարիք, որոնք թելադրված են ինչպես ՄՍՀ-ի և Եվրոպական մի շարք դիրեկտիվներով, այնպես էլ ոլորտի անընդհատ զարգացման արդյունքներով:

Համաձայն ՀՀ քաղ.օր. 1111-րդ հոդվածի 1-ին կետի՝ հեղինակային իրավունքը տարածվում է ստեղծագործական գործունեության արդյունք համարվող գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների վրա՝ անկախ մտավոր սեփականության օբյեկտների ստեղծագործության նշանակությունից ու արժանիքներից, ինչպես նաև այն արտահայտելու

1 Տե՛ս Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենք, ՀՀՊՏ2006.07.12/38(493):

2 Տե՛ս Խաչիկյան Ա., Ներսիսյան Ս. Մտավոր սեփականություն. տեսություն և պրակտիկա: Երևան, «Անտարես 2008», էջ 205:

3 Տե՛ս «Հայհեղինակ»Հ/Կ «Մտավոր Սեփականությունը բիզնեսի համար» շարք 4-րդ, Ստեղծագործական Արտահայտություններ 2009, էջ 3:

4 Տե՛ս Գրական և գեղարվեստական երկերի պաշտպանության մասին Բեռնի կոնվենցիա՝ ընդունված 1886թ. սեպտեմբերի 9-ին, փոփ. 1979թ. սեպտեմբերի 28-ին:

եղանակից:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը նվիրված է հեղինակային իրավունքի բովանդակությանը, համաձայն որի հեղինակային իրավունքը հեղինակի բացառիկ անձնական ոչ գույքային և բացառիկ գույքային իրավունքներն են իր ստեղծագործության նկատմամբ:

Սերգեյ Գրիշայը «Հեղինակային իրավունք» հասկացությունը ներկայացնում է երկու իմաստով՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ իմաստով հեղինակային իրավունքը իրավական նորմերի ամբողջություն է, որը կարգավորում է հեղինակի և ստեղծագործության միջև իրավահարաբերությունները՝ կապված գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների հետ: Սուբյեկտիվ իմաստով հեղինակային իրավունքի իմաստի տակ նա հասկանում է սուբյեկտիվ իրավունքների ամբողջություն, որոնք հեղինակի մոտ ծագում են՝ կապված գիտության, գրականության և արվեստի կոնկրետ ստեղծագործության ստեղծման հետ<sup>1</sup>:

«Հեղինակային իրավունք» հասկացությունն իր մեջ ընդգրկում է օրենդորությամբ ամրագրված ողջ գույքային և անձնական ոչ գույքային իրավունքները և ստեղծագործության նկատմամբ վերաբերմունքը<sup>2</sup>:

Հեղինակային իրավունքի ոլորտում գործող մի շարք միջազգային պայմանագրերում ևս բացակայում է դրա հասկացության մեկնաբանումը: Համեմատության համար կարող ենք դիտարկել Ռուսաստանի Դաշնության՝ արդեն ուժը կորցրած «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՌԴ օրենքի<sup>3</sup> 6-րդ հոդվածը, համաձայն որի հեղինակային իրավունքը հարաբերություն է, որը կապված է գիտության, գրականության և արվեստի ստեղծագործության ստեղծման հետ<sup>4</sup>: Նշված օրենքը ուժը կորցրած է ձանաչվել, ներկայում հեղինակային իրավունքի ոլորտը կարգավորվում է ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ գլխում նախատեսված նորմերով, սակայն այստեղ ևս լիարժեք մեկնաբանում չի տրված «հեղինակային իրավունք» հասկացության վերաբերյալ<sup>5</sup>:

Գիտության մեջ որոշ հեղինակներ տալիս են «Հեղինակային իրավունք»-ի հայեցակարգային հասկացությունը: Օրինակ՝ Ս.Ա.Սուդարիկովը հեղինակային իրավունքը սահմանում է որպես «իրավական կարգավիճակ հեղինակի և իր ստեղծագործական աշխատանքի արդյունքով ստեղծված գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների միջև»<sup>6</sup>:

Այսպիսով, «Հեղինակային իրավունք»-ը հեղինակի կողմից իր ստավոր գծունեության արդյունքի նկատմամբ ունեցած անձնական ոչ գույքային և

1 Տե՛ս Гришаев С.П. Авторское право. – Система ГАРАНТ, 2005, էջ 1:

2 Տե՛ս «Право интеллектуальной собственности»: учебник/Под Редакцией И.А. Близнеца.-2-е изд., перераб. И доп.– Москва: Проспект: 2016, էջ 49:

3 Տե՛ս ՌԴ օրենք «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» /09.07.1993 N5351-1/:

4 Տե՛ս Гражданский кодекс РСФСР 1964 г. Четвертый часть. ст. 475. <http://base.garant.ru/3961097/>

5 Տե՛ս Гражданский кодекс РФ от 18.12.2006 N 230-ФЗ – Часть 4, հոդվ. 1255:

6 Տե՛ս Судариков С. А. Право интеллектуальной собственности: учеб. — М.: ТК Вел-би, Изд-во Проспект, 2008, էջ 101:

գույքային իրավունքների ամբողջություն է, որոնք դիտվում են մեկ ընդհանրության մեջ և հանդիսանում են առանձնահատուկ հասարակական հարաբերություններ:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև մայրցամաքային երկրներում հարակից իրավունքների մասին, որտեղ Հայաստանի նման առանձնացվում են հեղինակային իրավունքները և հարակից իրավունքները, ինչպես օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, Սլովենիայում, Գերմանիայում, Ավստրիայում, ուր ևս գործում է «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» օրենք<sup>1</sup>: Ի տարբերություն մայրցամաքային իրավունքի ընտանիքի երկրների՝ ԱՄՆ-ի հեղինակային իրավունքը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, որը աշխարհում հայտնի է «copyright» անվամբ: Սակայն ԱՄՆ-ի օրենդրությունը չի տարանջատում հեղինակային և հարակից իրավունքները. copyright-ը պաշտպանության ձև է, որով ապահովվում են «բնօրինակ հեղինակային իրավունքներ»-ը՝ ներառյալ գրական, դրամատիկական, երաժշտական, գեղարվեստական և այլ մտավոր գործերի հեղինակների իրավունքները<sup>2</sup>: Այսինքն՝ ԱՄՆ-ում հարակից իրավունքները միաձուլված են հեղինակային իրավունքին: Հեղինակային և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքում հեղինակային և հարակից իրավունքները տարանջատված են իրարից, որովհետև հարակից իրավունքների սուբյեկտները նույն հեղինակներն են, ովքեր ունեն հեղինակային անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներ՝ ստեղծված ինքնատիպ արդյունքի նկատմամբ, լինի դա կատարում, հեռարձակում, բեմադրություն, թե ՀԻՀԻՄ ՀՀ օրենքում նշված այլ հարակից իրավունքի օբյեկտ:

Հեղինակային իրավունքի մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադարձ կատարել երկու խումբ կարևորագույն իրավունքների, որպիսիք են՝ հեղինակի ստեղծագործության հետ անմիջական կապ ունեցող և անքակտելի համարվող անձնական ոչ գույքային իրավունքները և գույքային իրավունքները:

Գերմանացի փիլիսոփաները, այդ թվում՝ Էմանուիլ Կանտը, հեղինակային իրավունքը կամ հեղինակի իրավունքը դիտում էին ոչ թե սուկ որպես սեփականության ձև, որը նյութական շահ էր ապահովում հեղինակին կամ իրավատիրոջը, այլև հեղինակի անձի ինքնադրսևորման միջոց<sup>3</sup>: Կանտի տեսակետը նպաստեց հեղինակային իրավունքի՝ որպես ոչ գույքային իրավունքի, կատեգորիայի զարգացմանը: Հեղինակային իրավունքի օբյեկտ համարվող մտավոր գործունեության ցանկացած արդյունք իրենից ինքնատիպ ստեղծագործություն է ներկայացնում, անկախ նրանից, թե մինչև այդ այդպիսի օբյեկտ գոյություն ունեն, թե ոչ կամ կա՞ նմանատիպը, թե ոչ: ՀԻՀԻՄ ՀՀ օրենքի 11-րդ հոդվածն օգտագործում է «բացառիկ գույքային իրավունքներ ստեղծագործության նկատմամբ» դրույթը: Մենք կիսում ենք օրենսդրի այն մոտեցումը, ըստ որի գույքային իրավունքներն ապահո-

1 Стів Миха Трампуж «Авторское Право»– Антаpec, 2004, էջ 26:

2 Стів The Copyright Clause of the United States Constitution. Article 1, Section 8, Clause 8 (the Copyright Clause).

3 Стів Անդրանիկ Խաչիկյան, Սուսաննա Ներսիսյան, Մտավոր Սեփականություն տեսություն և պրակտիկա, Երևան «Անտարես 2008» էջ 205:

վում են հեղինակի նյութական շահերը՝ տալով հեղինակին բացառիկ իրավունք՝ թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության կամ դրա օրինակների օգտագործումը (ՀԻՀԻՄ ՀՀ օրենքի 13-րդ հոդվ.):

Շարադրվածից պարզ է, որ գույքային իրավունքները ևս բացարձակ իրավունքներ են, և դրանց օգտագործումն այլ անձանց կողմից կիրականացվի, երբ ամկա է կլինի հեղինակի թույլատրությունը կամ արգելանքը: Սակայն ՀԻՀԻՄ-ն նախատեսում է այնպիսի դրույթ, ինչպիսին է ստեղծագործության ազատ օգտագործումը, որտեղ դրա օգտագործման համար ամենևին էական պայման չէ հեղինակի թույլատրությունը: Մասնավորապես ՀԻՀԻՄ ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ազատ օգտագործում է համարվում առանց հեղինակի համաձայնության և վարձատրության, սակայն հեղինակի անվան և ստեղծագործության ակզբնաղբյուրի պարտադիր նշումով ստեղծագործության օգտագործումը, դրա բնականոն օգտագործումը, որը չի հակասում ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին, և չի վնասում ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահերը: Բացի ներպետական օրենսդրությունից, միջազգային ակտերով, ինչպես օրինակ՝ Բեռնի կոնվենցիայով, սահմանվում են դրույթներ, երբ թույլատրվում է ստեղծագործության օգտագործում՝ առանց հեղինակի (իրավատիրոջ) թույլտվության՝ պահպանելով ակտում նշված պահանջները: Այսպիսով, Բեռնի կոնվենցիայի 10-րդ հոդվածը («Երկի ազատ օգտագործման որոշ դեպքեր. 1.Մեջբերումներ. 2.Ուսուցման նպատակով պատկերագրադրումներ. հեղինակի և սկզբնաղբյուրի նշում») թույլատրում է՝ մեջբերումներ (քաղվածքներ) երկից, որն արդեն օրինաչափ կերպով մատչելի է դարձել հանրությանը բարի սովորույթները պահպանելու պայմանով և նպատակն արդարացնող ծավալով՝ ներառյալ թերթերի ու ամսագրերի հոդվածներից մեջբերումներ մամուլի տեսության ձևով:

Կոնվենցիոն դրույթներից պարզ է դառնում, որ թույլատրվում է մեջբերումներ կատարել, եթե երկը օրինաչափ կերպով մատչելի է դարձել հանրությանը բարի սովորույթները պահպանելու պայմանով և նպատակն արդարացնող ծավալով: ՀՀ օրենսդրությունը չի պարունակում այնպիսի մի դրույթ, որտեղ նշված լինի Կոնվենցիայի թվարկված պահանջների առկայությունը, այլ պարունակում է «առանց հեղինակի *համաձայնության և վարձատրության* մասին» դրույթ: Ստացվում է, որ ստեղծագործության ազատ օգտագործման դեպքում պաշտպանվում են միայն հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները, (տես Բեռնի կոնվենցիայի 10-րդ հոդվածի, 3-րդ կետը և հոդված 10-ի կետ 1-ը), իսկ գույքային իրավունքներն այս դեպքում համարվում են չխախտված, քանի որ օգտագործումը պետք է չհակասի դրա բնականոն օգտագործմանը, և որն իր հերթին չպետք է հակասի ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին ու չվնասի ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահերին: Թե ինչ պետք է հասկանալ «ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներ» և «ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահեր»

ասելով, դրույթները մեկնաբանություն չեն պարունակում այդ մասին, սակայն, կարծում ենք, որ «ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներ» ասելով նկատի են առնվել ստեղծագործության օգտագործումը այնպիսի նպատակով, ինչպիսին այն կարող է ծառայել. օրինակ՝ գրական ստեղծագործությունը կարող է դառնալ բեմադրված խաղ՝ պահպանելով հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները: Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները, այն էլ՝ բացառիկ, այս դեպքում հաշվի չեն առնվում, և բացի այդ, այն օգտագործվում է առանց վարձատրության, քանի որ գույքային իրավունքները ապահովում են հեղինակի նյութական շահերը՝ տալով հեղինակին բացառիկ իրավունք՝ թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության կամ դրա օրինակների օգտագործումը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև երրորդ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը (ՀԻՀԻՄ ՀՀ օրենքի 13-րդ հոդվ.): Նշենք նաև պաշտպանության արժանի այնպիսի հեղինակային իրավունքներ, ինչպիսիք են անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները: Դրանց մասին խոսվել է դեռևս մինչև դրանց օրենսդրական ամրագրումն ու պաշտպանությունը: Ինչպես XVIII դարում Ֆրանսիացի նշանավոր դրամատուրգ Պիեռ Բոմարշեն գրում էր. «Հեղինակներին անարդարացիորեն մեղադրում են հարստանալու տենչի մեջ՝ ի լրումն նրանց վայելած փառքի: Փառքը, իրոք, խիստ հրապուրիչ է, սակայն դրա հետ մեկտեղ չպետք է մոռանալ, որ փառքից գոնե մեկ տարի օգտվելու համար բնությունը մեզ տվել է 365 օր ուտելու պահանջ»<sup>1</sup>: Այստեղից հասկանում ենք հեղինակի գույքային իրավունքների, այս դեպքում՝ վարձատրության իրավունքի մասին ակնարկը և անհրաժեշտությունը:

Հեղինակի՝ ստեղծագործության նկատմամբ ունեցած անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները գտնվում են փոխադարձ կապի և պայմանավորվածության մեջ և առանց այդ կապի գոյություն ունենալ չեն կարող<sup>2</sup>: Մտավոր աշխատանքի հետևանքով ստեղծված արդյունքն ստեղծողի և նրա ստեղծագործության միջև առաջանում է անխզելի կապ: Այդ կապը, որպես կանոն, պահպանվում է նաև ստեղծագործության օգտագործման իրավունքը, ստեղծագործության մարմնավորումը պարունակող նյութական առարկան այլ անձի օտարելու դեպքում: Ստեղծագործությունն օգտագործելու իրավագործությունն այլ անձի հանձնելը չի դադարեցնում դրա հեղինակի՝ որպես ստեղծողի անհատականությունն արտահայտող իրավագործությունները<sup>3</sup>:

Այսպիսով, հեղինակի անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները միշտ փոխկապակցված են՝ անկախ նրանից, թե գույքային իրավունքները փոխանցման եղանակներով պատկանում են այլ անձի, թե ոչ. այս դեպքում

1 Տե՛ս Անդրանիկ Խաչիկյան, Մուսանա Ներսիսյան, Մտավոր Սեփականություն տեսություն և պրակտիկա, Երևան «Աստարես 2008» էջ 203:

2 Տե՛ս Բարսեղյան Տ.Կ., Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական իրավունք, Երրորդ մաս, Երևան, 2003, էջ 13:

3 Տե՛ս Гарибян А.М. Авторское право на произведения науки. Ереван, 1975, էջ 17:

անձնական ոչ գույքային իրավունքները գույքային իրավունքների հետ միասին գործում են, եթե անգամ գույքային իրավունքները պատկանում են այլ անձի՝ հեղինակի կամ իրավատիրոջ կողմից օրենքով նախատեսված թույլտվությամբ (լիցենզիա, պայմանագիր, վաճառք և այլն): ՀԻՀԻՄ ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն օրինական ձանապարհով լույս ընծայված ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները վաճառքի կամ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման այլ միջոցով քաղաքացիական շրջանառության մեջ դրվելու դեպքում դրանց հետագա տարածումն իրականացվում է առանց հեղինակի թույլտվության և հեղինակային վարձատրության, բացառությամբ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված դեպքերի: Ըստ այդ հոդվածի՝ «Կերպարվեստի ստեղծագործության հեղինակն իրավունք ունի ստեղծագործության բնօրինակի կամ օրինակի սեփականատիրոջից պահանջելու վերարտադրման կամ վերանշակման իր իրավունքն իրագործելու հնարավորություն ընձեռել իրեն, եթե դրանով չեն վնասվում սեփականատիրոջ օրինական շահերը: Ընդ որում, սեփականատերը պարտավոր չէ ստեղծագործությունը հասցնել հեղինակի գտնվելու վայրը: Նշված հնարավորությունն ընձեռելիս սեփականատերը կարող է հեղինակից պահանջել ստեղծագործության բնօրինակի կամ օրինակի շուկայական գնի չափով գրավի կամ այլ միջոցի ապահովում: Նշված իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ ծախսերը հոգում է հեղինակը, որը պատասխանատվություն է կրում նաև ստեղծագործության բնօրինակին կամ օրինակին պատճառած որևէ վնասի համար»:

Ելնելով վերոգրյալից՝ հասկանալի է, որ քաղաքացիական շրջանառության մեջ դրվելու դեպքում ստեղծագործության հետագա տարածումն իրականացվում է առանց հեղինակի թույլտվության և առանց վարձատրության:

Մենք առաջարկում են **կատարել օրենսդրական փոփոխություն, այն է՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը վերտառել միայն որպես «Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենք**<sup>1</sup>: Մեր կարծիքով դա առավել կհեշտացնի այդ իրավունքների առանձին-առանձին դիտարկումը և պաշտպանությունը:

**Սույն աշխատանքի հեղինակն առաջարկում է նաև Հեղինակային և հարակից իրավունքների հետևյալ միասնական բնորոշումը. «Հեղինակային իրավունք»-ը իրավական կարգավիճակ է հեղինակի և իր ստեղծագործական աշխատանքի արդյունքով ստեղծված գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների միջև: Եվ քանի որ ՀԻՀԻ ՀՀ օրենքի 3-րդ գլուխը վերաբերվում է նաև հարակից իրավունքներին, անհարժեշտ է կատարել օրենսդրական ընդհանրացում (միասնացում), այն է՝ հարակից իրավունքների օբյեկտները դիտարկել միաժամանակ և՛ հեղինակային, և՛ հարակից իրավունքների օբյեկտներ և՛ դրանց նկատմամբ հեղինակ ձանաչել միևնույն անձին:**

<sup>1</sup> Այս առաջարկի օգտին է վկայում նաև Մոսկվոյի սեփականության գործակալությունում գտնվող «Հայաստանի Հանրապետության օրենքը հեղինակային իրավունքի մասին» օրինագիծը, [https://www.aipa.am/u\\_files/file/Naxagcer/heghinakain\\_orenq.pdf](https://www.aipa.am/u_files/file/Naxagcer/heghinakain_orenq.pdf):



**Лия Тевосян**

*Помощник заведующего юридической кафедры  
Международного университета Евразия*

## **ПОНЯТИЕ И СУЩНОСТЬ ТЕРМИНА «АВТОРСКОЕ ПРАВО»**

В статье проанализировано понятие авторских и смежных авторских прав с точки зрения защиты их внутригосударственным законодательством.

Проведено сопоставление между терминами «Авторское право» интеллектуальной собственности стран романо-германской системы. Дано единое понятие авторских и смежных авторских прав, сделано законодательное обобщение.

**Ключивые слова.** Интеллектуальная собственность, авторское право, смежные права, понятие, защита, конвенция, личные права, имущественные права, обобщение.

**Lia Tevosyan**

*Assistant Professor of Law department at Eurasia International University*

## **THE ESSENCE AND CONCEPT OF AUTHOR RIGHTS**

The article analyses the concepts of author right and some rights related to it from the perspective of protecting domestic state legislation. The article represents comparative analyses of the terms depicting “author rights” of mental property of the states belonging to Romano-Germanic legal family. We tried to present a uniform description of author right and rights related to it, in the scope of legislative generalization

**Key words:** mental property, author right, related rights, concept, protection, convention, private rights, property rights, generalization.